



Կարգապահական գործ թիվ ԿԳ-21002

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի մայիսի 04-ի թիվ 267-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/160-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԼԵՈՆԻԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Լիլիթ Ղազանչյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Մանե Կարապետյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Սարգարյանի, Կարեն Մեծլումյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի և Պավել Գյուլումյանի կազմով, քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի, քննության առնելով փաստաբան Արտաշես Լեոնիդի Հովհաննիսյանին (արտոնագիր՝ 2381) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

ՀԴԳ ղեկավար Մելանյա Առուստամյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 23.11.2020թ. ՀՀ ՓՊ հանրային պաշտպանի գրասենյակում մուտքագրվել է ՍԴ 0064/01/18 քրեական գործով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 18.11.2020թ. որոշումը (**այսուհետ՝ Որոշում**): Որոշմամբ նշված է. «Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալներ Ա.Պապիկյանի, Գ.Եղոյանի, Թ.Գևորգյանի, Հ.Գևորգյանի պաշտպան Արտաշես Հովհաննիսյանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2020 թվականի հունիսի 8-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել 2020 թվականի օգոստոսի 8-ին, որը վճռաբեկ դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ վերադարձրել է՝ սահմանելով 20-օրյա ժամկետ՝ վճռաբեկ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Պաշտպան Ա.Հովհաննիսյանը 2020 թվականի հոկտեմբերի 26-ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի ուսումնասիրությունից երևում է, որ ներկայացված բողոքը պարունակում է մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ հիմնավորումներ: Այսինքն՝ ներկայացրած վճռաբեկ բողոքում պաշտպան Ա.Հովհաննիսյանը չի վերացրել վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ արձանագրված ձևական սխալը»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտպան Ա.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու պարճատաբանությամբ»:

Դիմողի կարծիքով հանրային պաշտպան Արտաշես Հովհաննիսյանը (**այսուհետ՝ փաստաբան կամ հանրային պաշտպան**) ամբողջությամբ չի վերացրել վճռաբեկ բողոքում առկա թերությունները, ինչի արդյունքում այն թողնվել է առանց քննության:

Վերագրյալը հաշվի առնելով՝ Դիմողը միջնորդել է կարգապահական վարույթ հարուցել հանրային պաշտպանի նկատմամբ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 08.01.2021թ. թիվ 2-Ա/ԿԳ-21002 որոշման հիման վրա փաստաբան Արտաշես Հովհաննիսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք**) 2.7.1 և 2.8.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

15.01.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Կարեն Քամայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով պնդել է Դիմումով իր հայտնաձևը:

Դիմողը, թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Փաստաբանը ներկայացրել է բացատրություն և հայտնել հետևյալը.

Փաստաբան Արտաշես Հովհաննիսյանի կողմից ներկայացված բացատրությունը Պալատում մուտքագրվել է 16.12.2020 թվականին: Բացատրությամբ փաստաբանը հայտնել է, որ իր կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը պարունակում է 2018 թվականի ապրիլի 9-ի գործող խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ հիմնավորումներ:

Բացի այդ, եթե ինքը երկրորդ անգամ ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների մասում կատարել փոփոխություններ, ապա այդ դեպքում ևս բողոքը չէր ընդունվի վարույթ, այս անգամ այն հիմնավորմամբ, որ այն կդիտարկվեր ժամկետանց ներկայացված նոր բողոք:

Հանրային պաշտպանը նաև նշել է, որ իր կողմից ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների մեջ ընդհանրապես նշված չի եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ հոդվածների պարունակությունը, որը դատարանին հիմք կտար եզրակացնելու, որ ներկայացված բողոքը պարունակում է հին

խմբագրությամբ նախատեսված հիմնավորումներ:

Փաստաբան Արտաշես Հովհաննիսյանը նաև ներկայացել է կարգապահական նիստին և պնդել բացատրությամբ իր հայտնածը:

3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 15.03.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Փաստաբանն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 18.03.2021թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 04.05.2021թ. ժամը 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 11.08.2020 թվականին փաստաբան Արտաշես Հովհաննիսյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել: *Սույն փաստն ապացուցվում է 11.08.2020թ. վճռաբեկ բողոքի պատճենով:*

2. Վճռաբեկ դատարանը 14.09.2020թ-ի որոշմամբ վերադարձրել է ներկայացրած վճռաբեկ բողոքը՝ սահմանելով 20-օրյա ժամկետ՝ վճռաբեկ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Որպես ձևական սխալ նշվել է վճռաբեկ բողոքի պատճենը տուժողներին ուղարկված չլինելը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև 2018թ. ապրիլի 9-ը գործող խմբագրությամբ իրավական նորմեր վկայակոչելը: *Սույն փաստն ապացուցվում է 14.09.2020թ. որոշման պատճենով:*

3. Փաստաբանը 2020 թվականի հոկտեմբերի 26-ին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք: *Սույն փաստն ապացուցվում է 26.10.2020թ. վճռաբեկ բողոքի պատճենով:*

4. 18.11.2020 թվականին Վճռաբեկ դատարանը կայացրել է վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու վերաբերյալ որոշում: Որոշմամբ նշված է, որ վճռաբեկ բողոքը պարունակում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև 2018թ. ապրիլի 9-ը գործող խմբագրությամբ իրավական նորմեր և այդ մասով չի վերացվել նախկինում արձանագրված ձևական սխալը: *Սույն փաստն ապացուցվում է 18.11.2020թ. որոշման պատճենով:*

6. Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արտաշես Հովհաննիսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 08.02.2018թ., և 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արտաշես Հովհաննիսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պարճառաբանությամբ.

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝ Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Կանոնագրքի 2.7.1 և 2.8.1 ենթակետերի խախտման հատկանիշներով՝ գործող օրենսդրությանը չտիրապետելու, իր մասնագիտական գիտելիքները չկատարելագործելու և վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն չտրամադրելու վարքագիծը ստուգելու փաստերի առթիվ, որն արտահայտվել է փաստաբանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքում նախկին օրենսդրությանը հղում անելով:

Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կվկայեր փաստաբանի կողմից վերոնշյալ վարքագծի կատարումը, հետևաբար Դիմողը պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք է որակվեն փաստաբանի օգտին:

Ավելին՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն ուսումնասիրել է Փաստաբանի կողմից ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին ներկայացված վճռաբեկ բողոքը, որում կատարված են հղումներ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերին, սակայն այդ նորմերի բովանդակությունը մեջբերված չէ, ինչով պայմանավորված հնարավոր չէ գալ այն հստակ եզրահանգմանը, որ փաստաբանի կողմից վկայակոչվել են վճռաբեկ բողոքը ներկայացնելու պահին չգործող իրավական կարգավորումներ:

Վերոնշյալը հիմք ընդունելով՝ խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանի կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.1 և 2.8.1 ենթակետերի խախտում թույլ տալու փաստը չի հաստատվել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ, 39.7 և 39.8 հոդվածների պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արտաշես Լեոնիդի Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 2381) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Արտաշես Հովհաննիսյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի Խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Լիլիթ Ղազանջյան

04 մայիսի 2021թ.

թիվ ԿԳ/160-Ա

ք. Երևան